սահմաններում։ Ավելի ևս հավանական է դառնում այս յենթադրությունը նորանով, որ Սևանա վանքում գտնվում է վոմն Վանենի իշխանուհու դամբարան, որ հավանորեն նույն պիտի լինի մեր իշխանուհու հետ*, իսկ Սևանը ԺԲ. դարու վերջերում Մահկանաբերդի իշխանության հետ կապ պիտի ունենար, որ Քուրդ իշխանի հրամանով այդ վանքի դուռը նորոգվեր **։

Մեծ չե մեր տեղեկությունը նաև Գրիգոր Խաղբակյանի մասին. Գանձակեցին և Վարդան[1] հիշում են նորա մասնակցությունը Գանձակի պատերազմում, որ Իւանեն մղեց նույն քաղաքի պարսիկներից պատսպարված Խփչաղների դեմ. Իվանեն հաղթվեց և ուրիշների հետ գերի ընկան նաև Գրիգոր և նորա յեղբորորդին Պապաքը, ինչպես տեսանք առաջ. վերջինս սպանվեց, իսկ Գրիգոր ձերբակալվելով, շատ նեղության յենթարկվեց, ուրանալու քրիստոնեությունը. բայց վոչ միայն հանձն չառավ, այլ և անարգել սկսեց Մահմեդի կրոնը, որի համար և «քարշեցին զնա մերկ ի վերայ երկրի, և փշով քանցեցին զամենայն մարմինս նորա. և այնքան տանջեցին զնա, մինչև ի գանելն աւանդեաց զոգի իւր»։ Գանձակեցին այս պատերազմը նշանակում է 1220 թվից քիչ հետո, յերբ թաթարներն առաջին անգամ յերևացին Հայոց և Վրաց սահմաններում, իսկ Վարդան 1222 թվին։ Բայց մենք տեսանք, որ Գրիգոր Խաղբակյանի հիշատակին կանգնած խաչարձանը կրում է «ՈՁԲ» (=1233) թվականը. դժվար է ընդունել, թե 1222 թվին գերի ընկած Գրիգորը, նահատակված լինի 1233 թվին. մնում է ընդունել, թե խաչարձանը կանգնել են յուրայինները նորա մահվանից բավական հետո՝ հիշատակը հավերժացնելու համար։

Այդ փառավոր կոթողը կանգուն եր մինչև 1905 թվի հայ թուրքական ընդհարումները, որ սարալանջի բարձրությունից իջնում եր ամբողջ ձորագոգի վերա. բայց հետո ցած է գլորված խաչքարը բարձր պատվանդանից և յերկու կտոր արված. մենք առանձին առանձին նկարել ենք կտորները շատ անհարմար պայմաններում և մթացրել, ուստի և կորել են մանրամասնությունները և միայն ընդհանուր տպավորությունը մնացել (պատկ. 20). բուն խաչի մեծությունն է 2,82×1,17 մետր և հաստությունը 30 սմ., պատվանդանը հաստատված ժայռի վրա, քառանկյունի ձև ունի, ճակատը 2,44×2,2 մետր, իսկ կողքը 1,48×1,09 մետրը. պատվանդանի վերա դրված է գարնեզը 0,4 մետրը բարձրությամբ և ապա սորա վերա բուն պատվանդանը յերկու աստիճանով, վորոնցից ներքևինը 0,34 և վերինը 0,42 մետր. այսպիսով ամբողջ խաչարձանի բարձրությունը վեց մետրից ավելի յեր։ Խաչքարի ճակատին գրված է. «Ես եմ լոյս աշխարհի», իսկ գարնեզի վրա, որ դարձյալ ցած է գլորված, «Թուի ՈՁԲ. Գրիգոր որդի Խաղբակա»։ Ճակատի գարնեզի տակն է մի խնդրվածքի խմբանկար՝ δέησις,. Հիսուս նստած է բարձրաթիկունք աթոռի վրա, աջից կանգնած է Հոհաննես և ձախից Մարիամ, լուսո պսակներով. Հիսուս աջով խաչակնքում է, իսկ ձախով մի գունդ բռնել, վերնազգեստը ձգված ձախ թևի վերայով, այսինքն համաձայն հայ և բյուզանդական արվեստների մեջ ընդհանրացած ամենակալների (παντοκράτωρ) ավանդության։ Քարի կեղրոնում քանդակված է բուն խաչը, սորա տակ գծական կամաբի տակ Գրիգոր Խաղբակյանի բարձրաքանդակը ձիու վրա, յերևսը աջ դարձած, աջին յերկար նիզակ. իսկ ձախով ձիու սանձը բռնած. իշխանի գլխին բարձր, սաղավարդաձև գլխարկ։ Ձիու պարանոցի տակից, կրծքի վերա կախված է մի զարդ. պոչը հանգույց արած յերևում է սանձը և թամքի զարդարանքը։ Խաչքարերի վերա այդպիսի կենցաղական կամ պատմական բարձաքանդակներ հազվադեպ չեն, բացի Խաչենից նաև ուրիշ տեղերում*։

Գրիգոր Խաղբակյանի բարեպաշտական հոգացողության առարկան յեղել է նորա իշխանության հոգևոր կեդրոն Աղջոց Ս. Ստեփանոսի վանքը. յերրորդ գլխի վերջում (եջ. 63) ցույց ենք տվել վանքի ծագման պարագաները. ավելի մանրամասնություններ կտանք, յերբ առիթ կունենանք Խաղբակյանց հոգևոր կեդրոնների կամ վանքերի մասին խոսել. բայց այստեղ մեր պատմության թելը պահանջում է պարզել Գրիգոր Խաղբակյանի մասնակցությունն այդ խնդրում։ Շենքը կառուցված է 1212—1217 թ.թ., ուրեմն այն ժամանակ, յերբ արդեն հաստատված եր Խաղբակյան կողմնապահությունը և Բեղվա ձորը Գրիգոր Խաղբակյանի սեպհականությունն եր։ Նոր իշխանության գլուխ՝ Վասակի որդինակին պիտի հետևեր և կրտսերը, ոժանդակ հանդիսանալով յուր իշխանության մեջ մի հոգևոր կեդրոն

* Խաչիկ վարդապետը արտագրել է և գծագրել որորոցաձև դամբարանի արձանագրությունը. «Զ Ժ Ը (=1269) թիվակիսս ! Ես Վանենի դուստր (s!) Զաջուռո», բայց այնքան է յեղծված «Զաջուռ» բառը, որ դժվար է այս մնացորդի վերա հաստատապես պնդել նույնության մասին։ Մենք անձամբ չենք տեսել և քննել այս արձանագրությունը։

** † Ի թվ. հայոց ՈԻԵ Նորոգեցաւ դուռն սբ եկեղեցոյս հրաման / աւ. իշխանաց իշխան / Քրդին եւ ձեռամբ Յոհաննիսի հիւսան որք ընթեռնոյք յիշեսջիք»։ Լուսանկարված է մեր կողմից և ստուգված։ Համ. Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց. Գեղարքունի. Վաղարշ. 1895. 120։

[1] Գանձակեցի. 194 Վարդան 197։

* Վեղիի ակունքներում Զղին գյոլ կոչված Թուրքարնակ գյուղի մոտ գտնվում եր մի հոյակապ և բարձր խաչքար Ամենափրկիչ անունով, տարաբաղդաբար այժմ կործանված, որ կանգնել է Մամիկոն իշխանը յուր հոր Գրիգոր և մոր Մամքանի հիշատակին Մամիկոնյան տոհմից։ Պատվանդանի վրա գտնվում է Մամիկոնի բարձրաքանդակը ձիու վրա նստած, տես. Strzygowski. die Baukunst der Armenier. 258։ Մի ուրիշ խաչքար իշխանական բարձրաքանդակով ձիու վրա նստած՝ գտնվում է Կոտայքի Ճաթղռան գյուղի մոտ, Ս. Սարգիս կոչված վայրում։ Նման խաչարձանների մասին տես սույն գրքի եջ 32 և Орбели. Бытовые рельефы ևն։